Գաւառներ	Ցանուած է չեմվերբա	Հնձուած է չեմվերբա	Պտղաբերութիւն 1890 թ.	1891 թ.
Գեօկչայի	100	2,400	30,0	24,0
Ջաւադի	2,000	—	—	—
Ղուբայի	900	7,800	5,0	8,7
Լենքորանի	70	1,000	7,5	14,2
Շամախու	1,200	27,500	26,0	22,9
Բոլորը	4,170	37,800	26,0	22,9

Ջաւադի գաւառում, ինչպէս և անցեալ 1890 թ. բոլոր կորեակը ոչնչացրեց մորեխը, որ բացատրվում է կորեկի աւելի ուշ բոնելովը, համեմատելով միւս հացաբոյսերի հետ։ Մինչդեռ ցորենը և գարին այնքան պնդանում են, որ մորեխի համար կերակուր լինելու անընդունակ են դառնում, կորեկն ընդ հակառակը դեռ կանաչ և փափուկ է լինում, ուստի և ենթարկւում է մորեխի ուերման։

Մնացած հացահատիկներից մշակվում է միայն հաճարը, այն եւս շատ աննշան քանակութեամբ և բացառապէս ռուս գաղթականների ձեռքով։ Միեւնոյնը պէտք է ասել սիսեռի և գետնախընձորի մասին, որ համարեա չեն գործածում տեղացի բնակիչները։ Արուեստագիտական բոյսերից աննշան քանակութեամբ մշակում են վուշ, կանեփ, քունջութ և զաֆրան։ Վերջին ժամանակներում սկսել է յաջողութեամբ զարգանալ նաեւ բամբակի մշակումը, գլխաւորապէս Գեօկչայի գաւառում, ուր ներկայ տարում ժողովուած է մինչեւ 30,000 փութ բամբակ, իսկ եթէ հունձը չընկնէր երկարատեւ անձրեւների ժամանակ, աւելի եւս նշանաւոր արդիւնք կտար։

ՁԵՐԱՄԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Ներամապահութիւնով, ինչպէս մի արուեստագիտութիւնով, պարապում են գլխաւորապէս երկու գաւառներում Շամախու և Գեօկչայի և այն միայն դաշտային մասերում. Ղուբու և Լենքորանի գաւառներում այս ճիւղի պարապմունքը այնքան էլ մեծ